



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
ԲՆԱԴԱՆՈՒԹՅԱՆ  
ԵՎ ԲՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ



Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

« 2019թ »

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 08

**Ձեռնարկողը՝**

**<<Ռուբիզոն>> ՍՊԸ**

Արագածոտնի մարզ, գ. Կաքավաձոր

**Գործունեությունը՝**

**Օթևանի տուֆերի երևակման տարածքում 2019թ. կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-տնօրեն՝



Ռ. Ոսկանյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻԶԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

թիվ ԲՓ 08

27 02 2019թ.

**Օթևանի տուֆերի երևակման տարածքում 2019թ. կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ձեռնարկող՝

<<Ռուբիզոն>> ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Նախնական գնահատման հայտ  
Գ կատեգորիա

Գտնվելու վայրը՝

Արագածոտնի մարզ

Համաձայն ներկայացված նախնական գնահատման հայտի նախատեսվում է երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ կատարել Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Օթևանի տուֆերի երևակման 6.8հա մակերեսով տարածքում:

Ընկերությունը կողմից Օթևանի տուֆերի երևակման երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները հանքային դաշտում նախատեսում է իրականացնել հետևյալ մեթոդանաբությամբ.

- տոպոմարկշեյդերական աշխատանքներ 1:1000 մասշտաբի – 6.8հա,
- մեխանիկական սյունակային հորատում 132մմ և 112մմ տրամագծերով – 100զծ.մ.,
- հորատող հաստոցի տեղակայում և տեղահանում – 4,
- փորձնական բացահանքի անցում – 300.0մ<sup>3</sup>,
- նմուշարում – 17 հանուկային նմուշ, 12 մենաքար, 1 նմուշ պետրոգրաֆիական ուսումնասիրությունների համար, 2 նմուշ քիմիական կազմի ուսումնասիրության համար,
- լաբորատոր ուսումնասիրություններ,
- հետախուզական փորվածքների փաստագրում – 100.0մ հորատհանուկ, 20.0մ փորձնական բացահանք, 80.0մ բնական մերկացումներ,
- հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական դիտարկումներ,
- ռադիոմետրական ուսումնասիրություններ:

Օթևանի հրաբխային տուֆերի երևակման տարածքը գտնվում է Օթևան գյուղից մոտ 1.0կմ հյուսիս-արևմուտք՝ 2020-2055մ բացարձակ բարձրությունների վրա, իսկ ք. Աշտարակ մարզկենտրոնից 40.0կմ հեռավորության վրա: Մոտակա բնակավայրերն են Կաքավաձոր, Վերին Բազմաբերդ, Ներքին Բազմաբերդ, Դիան և Մեծաձոր գյուղերը:



Լեռնագրական տեսակետից տեղամասի (երևակման) տարածքը հարում է Հայկական հրաբխային բարձրավանդակի Արագած-Սյունիքի ենթամարզի Արագածի լեռնազանգվածի հարավային լանջերին՝ Շամիրամի սարավանդի հարավ-արևելյան մասերին և բնութագրվում է բլրաալիքավոր ռելիեֆով: Սարավանդի տարածքում առկա են բազմաթիվ սելավաբեր ձորակներ և հեղեղատներ: Ռելիեֆում առավել արտահայտված է 6.0կմ երկարությամբ ձորակը, որը սկիզբ է առնում Թալիշ գյուղի հյուսիսային մասում: Դրանից հարավ սկիզբ է առնում մեկ այլ, ավելի սաղր հեղեղատ, որը ձգվում է մոտ 7.0կմ երկարությամբ և ավարտվում է Հոկտեմբերյանի ջրանցքի մոտ:

Սողանքային երևույթներ բուն Օթևանի տուֆերի երևակման տարածքում չեն արձանագրվել: Մոտակա սողանքային մարմինները գտնվում է երևակման տարածքից ավելի քան 11.0կմ հեռավորության վրա: Այն արևմուտքից սահմանակցում է 50.0մ խորության ձորակի հետ, որը սակավաջուր է, իսկ ամռան ամիսներին՝ գրեթե չոր:

Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքը համարվում է լավ ինֆիլտրացվող գոտի, իսկ մթնոլորտային տեղումները՝ ինֆիլտրացվելով ճեղքավորված, ծակոտկեն տուֆերի հաստվածքով, բեռնաթափվում են երևակման տարածքը արևմուտքից սահմանափակող ձորակում:

Շրջանի տարածքն անտառազուրկ է: Տարածված են շագանակագույն, բարձրադիր գոտում նաև՝ քարքարոտ սակավազոր սևահողերը, ծածկված հացազգի, տարախոտահացազգի, երբեմն մարգագետնատափաստանային բուսականությամբ: Օթևանի տուֆերի երևակման տարածքը, ինչպես նաև հարակից շրջանները ներառված չեն բնության հատուկ պահպանվող տարածքում: Համաձայն հայտի՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների համար հայցվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված բուսական կամ կենդանական տեսակների աճելա և ապրելավայրեր չեն արձանագրվել:

Երևակման տարածքում հողերի խախտումը կապված է լինելու փորձնական բացահանքի անցման հետ: Հորատման հարթակների կառուցում չի նախատեսվում, դա թույլ է տալիս երևակման տարածքի հարթ մակերևույթը և օգտակար հաստվածքի մերկացվածության աստիճանը: Աշխատանքների կատարման համար օգտագործվելու է գոյություն ունեցող դաշտամիջյան ճանապարհները: Ընդ որում, փորձնական բացահանքի անցման ժամանակ առաջանում է մոտ 100.0մ<sup>3</sup> մակաբացման ապար, որից՝ մոտ 30.0մ<sup>3</sup> հողաբուսական շերտ (երևակման տարածքում առկա են 0.2-0.3մ հզորությամբ շագանակագույն տափաստանային հողաբուսաշերտ) և մոտ 70.0մ<sup>3</sup> փուշտա շերտի ջարդոտված, ճեղքավորված տուֆեր: Փուշտա շերտի ապարները կօգտագործվեն դեպի երևակում տանող դաշտամիջյան ճանապարհի բարեկարգման համար, ինչը միաժամանակ թույլ կտա խուսափել ընդերքօգտագործման թափոնների առաջացումից և դրանց կուտակման/տեղադրման համար հողերի օտարումից: Փորձնական բացահանքի անցման ժամանակ հողաբուսական շերտը կհեռացվի, կկուտակվի բացահանքի եզրագծի մոտ, այնուհետև կօգտագործվի ռեկուլտիվացիայի համար: Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա: Հանքերևակման տարածքում գոյություն ունեցող հորիզոնները բացակայում են, ինչը պայմանավորված է տարածքը կազմող ապարների ֆիզիկամեխանիկական հատկություններով: Մոտակա մակերևույթային ջրային հոսքը ձևավորվում է երևակման տարածքը արևմուտքից սահմանափակող ձորակում և կրում է



ժամանակավոր բնույթ: Երևակման տարածքը գտնվում է ձորակի հատակից (հետևաբար, առվակի հունից) մոտ 200.0մ ավելի բարձր հիպսոմետրիկ նիշերում:

Հաշվի են առնված հետախուզվող տեղամասի երկրաբանական կառուցվածքը և երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման լեռնատեխնիկական պայմանները: Հետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել մինչև 25.0մ խորությամբ 4 հորատանցքերով, որոնց միջոցով կուսումնասիրվի և կնմուշարկվի տուֆերի հաստվածքը: Ընտրված հետախուզագանցը հետախուզական փորվածքների միջև 125-290մ հեռավորությամբ է, որը թույլ կտա հետախուզված պաշարները գնահատել արդյունաբերական կարգով:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրության նպատակով նախատեսվում է յուրաքանչյուր հորատանցքից վերցնել մինչև 5.0մ երկարությամբ հանուկային նմուշներ: Ընդ որում հորատանցքերը նախատեսվում է նմուշարկել անընդհատ տիրույթներով:

Յուրաքանչյուր հետախուզագծի վրա հորատանցքերի միջոցով օգտակար հաստվածքը կուսումնասիրվի ամբողջ հզորությամբ: Նախատեսվում է տոպոգրաֆիական և երկրաբանական հանույթ, ինչպես նաև փորձնական բացահանքի անցում, նմուշարկում, ֆիզիկամեխանիկական լաբորատոր փորձարկումներ և ուսումնասիրություններ:

Սույն նախագծով նախատեսվում է կատարվել է տեղամասի տարածքի 1:1000 մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ մոտ 6.8հա մակերեսով տարածքում: Նախատեսված աշխատանքների իրականացման ընթացքում, անհրաժեշտության դեպքում կկատարվի վերոհիշյալ տոպոգրաֆիական հիմքի ճշգրտում, բոլոր հետախուզական փորվածքների և երկրաբանական սահմանների գործիքային տեղադրմամբ, որի հիմքի վրա կկազմվի տեղամասի երկրաբանական քարտեզը:

Հորատման աշխատանքները կիրականացվեն սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով: Հորատումը կկատարվի կարծր համաձուլվածքային թագիկներով, 132մմ և 112մմ տրամագծերով, ՈւԿԲ 200(ԶԻԼ131 Ա) տիպի ինքնագնաց հորատող հաստոցով:

Հետախուզվող տեղամասում օգտակար հանածոյի եզրագծման և ըստ խորության ուսումնասիրման համար նախատեսվում է հորատել 4 հորատանցք մինչև 25.0մ խորությամբ, ընդհանուր 100.0մ ծավալով, որը ենթակա է փոփոխման կախված երկրաբանական աշխատանքների արդյունքից: Հորատահանուկի նվազագույն ելքը՝ 80%:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են հորատանցքերի հորատահանուկը, բնական մերկացումները և փորձնական հանույթի բացահանքը:

Տուֆերի լեռնային զանգվածից պատքարի ելքի տոկոսը որոշելու համար նախատեսվում է մեկ փորձնական բացահանքի անցում՝ 300.0մ<sup>3</sup> ընդհանուր ծավալով, որից 200.0մ<sup>3</sup> թարմ չհողմնահարված տուֆեր են: Նշված աշխատանքների ընթացքում կճշտվի հումքի արդյունահանման և տեղափոխման ընթացքում կատարված ծախսերը, որոնք կդրվեն հանքավայրի արդյունաբերական գնահատման հիմքում: Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից, բնական մերկացումներից ու բացահանքից:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է վերցնել 17 հանուկային նմուշ մինչև 5.0մ երկարությամբ,



12 մենաքար բացահանքից և մերկացումներից, ինչպես նաև 1 նմուշ պետրոգրաֆիական ուսումնասիրությունների ու 2 նմուշ քիմիական կազմը որոշելու համար: Վերցված նմուշները կենթարկվեն փորձարկումների, համապատասխան լիցենզավորում ունեցող ընկերության լաբորատորիայում:

Նախատեսվում է կատարել համապատասխան ուսումնասիրություններ և դիտարկումներ հետախուզվող տեղամասի ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով:

Հաշվի առնելով տեղամասի հարթ ռելիեֆը և արդեն իսկ գոյություն ունեցող դաշտամիջան ճանապարհները, երկրաբանական ուսումնասիրության ընթացքում հորատման հրապարակների և ճանապարհների շինարարություն չի նախատեսվում:

Տարվա չոր եղանակներին փոշեռաջացումը կանխելու կամ նվազեցնելու նպատակով իրականացվելու է աշխատանքային տարածքների ջրցանում: Աշխատանքների ընթացքում արտադրական թափոններ չեն առաջանա, ինչը էականորեն մեղմում է շրջակա միջավայրի վրա ընդերքօգտագործման բացասական ազդեցությունը: Նախատեսվող աշխատանքների արդյունքում՝ երկրաբանական ուսումնասիրության ընթացքում հողային զանգվածների բեռնման, բեռնաթափման և տեղափոխման, շինարարական տեխնիկայի տեղաշարժման ժամանակ կառաջանան անօրգանական փոշու արտանետումներ, իսկ շինարարական տեխնիկայի շարժիչների աշխատանքի դեպքում՝ դիզելային վառելիքի այրման արգասիքների արտանետումներ, որոնք կունենան ժամանակավոր բնույթ և կարտանետվեն հարթակային աղբյուրներից: Ըստ հայտի՝ երևակման տեղամասը զուրկ է անտառային ծածկույթից, որի 60-70% հողաբուսական շերտը բացակայում է: Փորձնական հանույթի ժամանակ նախատեսվում է հանել հողաբուսաշերտը և պահեստավորել, իսկ աշխատանքների ավարտից հետո օգտագործել լանդշաֆտի վերականգնման նպատակով: Վերականգնումը իրականացվելու է ձեռքով, իսկ ռեկուլտիվացիոն աշխատանքների իրագործման համար պահանջվող գումարը կկազմի 90.000 դրամ գումար:

Ընդհանրացնելով և վերլուծելով ներկայացված նախնական գնահատման հայտը, բնապահպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումներից ստացված կարծիքները, 12.02.2019թ. Օթևանի համայնքապետարանի տարածքում իրականացված հանրային քննարկումները, ինչպես նաև փորձաքննության գործընթացում ի հայտ եկած դիտողությունների ու առաջարկությունների հիման վրա իրականացված լրամշակումը կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

Երկրաբանական աշխատանքների ժամանակ հնարավոր է հողերի խախտում և աղտոտում՝ փոխադրամիջոցների արտանետումներով, նախնական գնահատման հայտում ներկայացված բնապահպանական միջոցառումների իրականացումը հնարավորություն կտա նվազեցնելու կամ մեղմելու իրականացվող աշխատանքների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև վերահսկելու նախատեսվող աշխատանքների գործընթացը: Հաշվի առնելով աշխատանքների ոչ մեծ ծավալները, նախատեսվող գործունեությունը բնապահպանական տեսակետից կունենա ոչ էական ազդեցություն և նախատեսված միջոցառումների արդյունքում տարածքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչներով, կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:



Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ մասի՝ փորձաքննական եզրակացությունը կորցնում է ուժը, եթե նախատեսվող գործունեության իրականացումը չի սկսվում փորձաքննական եզրակացության տրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

### Փորձաքննական պահանջներ

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է «Օրենսդրությամբ» սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ:
2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս պահպանել նախնական գնահատման հայտում ամրագրված հայցվող տարածքի չափերը, բնապահպանական միջոցառումների ծրագրի պահանջներն (մասնավորապես՝ համայնքը սնուցող ջրային ավազանի վրա հնարավոր վնասակար ազդեցությունների կանխարգելման, նվազեցման կամ բացառման նպատակով և այլն), իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցից միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական, կառուցման և շահագործման հետ կապված բոլոր նորմերը:
3. Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում առաջացած շինադրը (կենցաղային ադր), ինչպես նաև ջրօգտագործումն անհրաժեշտ է իրականացնել «Օրենսդրությամբ սահմանված կարգով»:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ռուբիզոն» ՍՊԸ-ի Արագածոտնի մարզի Օթևանի տուֆերի երևակման տարածքում 2019թ. կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝

Ա. Դոնոյան

Գլխ. մասնագետ՝

Կ. Մովսիսյան

